Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-902-27.08.2024-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի երկրորդ նախադասությունից հանել «, և գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկսվում է սկզբից» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-5.5-րդ մասերով.

«5.1. Դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունը սկզբից սկսելու կամ գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին, բացառությամբ առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքերի: Գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքում առաջին ատյանի դատարանը գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ որոշում է կայացնում գործի քննությունը սկզբից սկսելու կամ գործը դատաքննության փուլից վերսկսելու մասին:

5.2. Եթե սույն հոդվածով նախատեսված կարգով գործի (վերաքննիչ բողոքի) քննությունը շարունակվում է ընդհատման պահից, սակայն գործի (վերաքննիչ բողոքի) քննության համար սույն օրենսգրքով սահմանված և մնացած ժամկետը պակաս է մեկ ամսից, ապա այդ ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով, իսկ եթե տվյալ գործի կամ բողոքի քննության համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետը հավասար է մեկ

ամսվա կամ պակաս է մեկ ամսից, ապա՝ տվյալ գործի կամ բողոքի քննության համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետով:

5.3. Գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունը շարունակվում է գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման՝ դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության պահից:

5.4. Գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին որոշում կայացվելու դեպքում մինչև գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման պահն ավարտված դատավարական ժամկետները չեն վերսկսվում, իսկ դատավարության մասնակիցները չեն կարող կատարել այնպիսի գործողություններ, որոնց կատարման ժամկետը լրացել է մինչև գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման պահը:

5.5. Գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակվելու դեպքում մինչև գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման պահը կատարված գործողությունները կամ ընդունված որոշումները պարտադիր են և ունեն իրավական ուժն այնպես, ինչպես դատարանի կազմի կամ դատական կազմում փոփոխություն տեղի չունենալու դեպքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.

«11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված ինքնաբացարկի հիմքերը բացահայտելու անհրաժեշտության դեպքերում դատարանը դատական նիստի ծանուցագրում նշում է կատարում այդ մասին: Եթե կողմը, ծանուցված լինելով ինքնաբացարկի հիմքերը բացահայտելու նպատակով հրավիրված դատական նիստի մասին, չի ներկայանում դատական նիստին կամ չի ներկայացնում դատական նիստը հետաձգելու վերաբերյալ հիմնավորված միջնորդություն, ապա դատարանը ինքնաբացարկի հիմքերը կողմերին բացահայտում է գրավոր եղանակով: Նշված ծանուցագիրը ստանալու պահից եռօրյա ժամկետում ինքնաբացարկի հիմքերի

վերաբերյալ գրավոր դիրքորոշում չներկայացվելու դեպքում ինքնաբացարկը համարվում է կողմի կողմից անտեսված:»:

Հոդված 3. Օրենսգրքի 153-րդ հոդվածում՝

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) իրավունքի իրականացման սահմանափակում:».

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի նկատմամբ մեկ դատական վարույթի շրջանակում յուրաքանչյուր դատական ատյանում դատական տուգանք կարող է կիրառվել, եթե մինչև դատական տուգանքի կիրառման հանգեցնող արարքը կատարելը փաստաբանի նկատմամբ կիրառվել է առնվազն երկու այլ սանկցիա:»:

Հոդված 4. Օրենսգրքի 155-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Եթե վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը վերացնում է դատական տուգանք կիրառելու մասին որոշումը, ապա դատական ակտով լուծում է նաև նախապես վճարված տուգանքի վերադարձի հարցը:

5. Մեկ դատական վարույթի շրջանակում յուրաքանչյուր դատական ատյանում որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի նկատմամբ դատական տուգանք կարող է կիրառվել ոչ ավելի, քան մեկ անգամ:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 155.1-ին և 155.2-րդ հոդվածներով.

«**Հոդված 155.1. Դատական նիստից դուրս դատական տուգանք կիրառելու առանձնահատկությունները**

1. Եթե դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցը դրսևորել է այնպիսի վարքագիծ կամ կատարել է այնպիսի արարք, որը կարող է հանգեցնել

դատական տուգանքի կիրառման, ապա այդ անձից պահանջում է գրավոր պարզաբանում վերոնշյալ վարքագծի կամ արարքի վերաբերյալ: Պարզաբանում պահանջելու մասին ծանուցագրում նշվում են այն հանգամանքները, որոնք դատարանի գնահատմամբ կարող են հանգեցնել դատական տուգանքի կիրառման:

2. Գրավոր պարզաբանումը կարող է ներկայացվել պարզաբանում պահանջելու մասին դատարանի ծանուցագիրը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:

3. Գրավոր պարզաբանում ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո 20-օրյա ժամկետում դատարանն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է դատական տուգանք կիրառելու հարցը: Դատական տուգանք կիրառելու հիմքերի բացակայության դեպքում նույն ժամկետում դատարանը դատավարության մասնակցին ծանուցում է այդ մասին:

Հոդված 155.2. Իրավունքի իրականացման սահմանափակում կիրառելու առանձնահատկությունները

1. Իրավունքի իրականացման սահմանափակումը դատավարության մասնակցի՝ սույն օրենսգրքով սահմանված որոշակի իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում համապատասխան որոշմամբ դրանց իրականացման համար ժամանակային կամ քանակական պայմանների սահմանումն է:

2. Սույն հոդվածով նախատեսված դատական սանկցիան կարող է կիրառվել միայն հետևյալ իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում.

1) գործի նյութերին ծանոթանալը, դրանց պատճեններ ստանալը, քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելը,

2) բացարկ հայտնելը.

3) ապացույցներ ներկայացնելը և դրանց հետազոտմանը մասնակցելը,

4) դատավարության մասնակիցներին հարցեր տալը,

5) միջնորդություններ ներկայացնելը, ցուցմունքներ տալը,

6) դիրքորոշում ներկայացնելը:

3. Սույն հոդվածով նախատեսված դատական սանկցիայի կիրառումը չպետք է բացառի համապատասխան իրավունքի բուն իրացումը:

4. Եթե դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցը դրսևորել է այնպիսի վարքագիծ կամ կատարել է այնպիսի արարք, որը կարող է հանգեցնել իրավունքի իրականացման սահմանափակում սանկցիայի կիրառման, ապա այդ անձին հասկանալի ձևով նախազգուշացնում է սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, պարզաբանում սանկցիա կիրառելու հիմքերը և հետևանքները: Եթե դատավարության մասնակիցը նախազգուշացումից հետո կատարում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողություններից որևէ մեկը, ապա դատավորն իրավասու է այդ անձի նկատմամբ կիրառելու իրավունքի իրականացման սահմանափակում սանկցիան:

5. Իրավունքի իրականացման սահմանափակումը դատական նիստում կիրառվելու դեպքում կայացվում է նույն դատական նիստում դատարանի արձանագրային որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ դատական նիստից դուրս կայացվելու դեպքում՝ առանձին դատական ակտի ձևով:

6. Իրավունքի իրականացման սահմանափակման ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի վերականգնելու իրավունքի իրականացումը՝ վերացնելով կիրառված ժամանակային կամ քանակական պայմանները:»:

Հոդված 6. Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3.1-ին մասի առաջին նախադասությունում «սույն հոդվածի 368-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերով:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների (դիմումների) հիման վրա հարուցված գործերի վրա:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կիրառված դատական տուգանքների կամ դատական տուգանք կիրառելու մասին միջնորդությունների նկատմամբ կիրառելի են տուգանքի կիրառման կամ միջնորդության ներկայացման պահին գործող նորմերը:

4. Սույն օրենքի 1-ին հոդվածը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցած դատական կազմի կամ դատական կազմում ընդգրկված դատավորի փոփոխության դեպքերի վրա:

Տեղեկանք

նախագծում կատարված փոփոխությունների մասին

Լրամշակված նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-902-27.08.2024-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2018 թվականի փետրվարի 9-ի Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 27-րդ հոդվածում՝

1) 5-րդ մասի երկրորդ նախադասությունից հանել «, և գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն սկսվում է սկզբից» բառերը.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 5.1-5.5-րդ մասերով.

«5.1. Դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության դեպքում գործը (վերաքննիչ բողոքը) վարույթ ընդունելու հետ միաժամանակ դատարանը որոշում է կայացնում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունը սկզբից սկսելու կամ գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին, բացառությամբ առաջին ատյանի դատարանում գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքերի: Գործի դատաքննությունն ավարտված լինելու դեպքում առաջին ատյանի դատարանը գործը վարույթ ընդունելու հետ միաժամանակ որոշում է կայացնում գործի քննությունը սկզբից սկսելու կամ գործը դատաքննության փուլից վերսկսելու մասին:

5.2. Եթե սույն հոդվածով նախատեսված կարգով գործի (վերաքննիչ բողոքի) քննությունը շարունակվում է ընդհատման պահից, սակայն գործի (վերաքննիչ բողոքի) քննության համար սույն օրենսգրքով սահմանված և մնացած ժամկետը պակաս է մեկ

ամսից, ապա այդ ժամկետը երկարաձգվում է մեկ ամսով, իսկ եթե տվյալ գործի կամ բողոքի քննության համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետը հավասար է մեկ ամսվա կամ պակաս է մեկ ամսից, ապա՝ տվյալ գործի կամ բողոքի քննության համար սույն օրենսգրքով նախատեսված ժամկետով:

5.3. Գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին որոշում կայացվելու դեպքում գործի (վերաքննիչ բողոքի) քննությունը շարունակվում է գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման՝ դատարանի կազմը փոխվելու կամ դատական կազմում փոփոխության պահից:

5.4. Գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակելու մասին որոշում կայացվելու դեպքում մինչև գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման պահն ավարտված դատավարական ժամկետները չեն վերսկսվում, իսկ դատավարության մասնակիցները չեն կարող կատարել այնպիսի գործողություններ, որոնց կատարման ժամկետը լրացել է մինչև գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման պահը:

5.5. Գործի (վերաքննիչ բողոքի) քննությունն ընդհատման պահից շարունակվելու դեպքում մինչև գործի (վերաքննիչ բողոքի) քննության ընդհատման պահը կատարված գործողությունները կամ ընդունված որոշումները պարտադիր են և ունեն իրավական ուժն այնպես, ինչպես դատարանի կազմի կամ դատական կազմում փոփոխություն տեղի չունենալու դեպքում:»:

Հոդված 2. Օրենսգրքի 29-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 11-րդ մասով.

«11. Սույն հոդվածի 10-րդ մասով նախատեսված ինքնաբացարկի հիմքերը բացահայտելու անհրաժեշտության դեպքերում դատարանը դատական նիստի ծանուցագրում նշում է կատարում այդ մասին: Եթե կողմը, ծանուցված լինելով ինքնաբացարկի հիմքերը բացահայտելու նպատակով հրավիրված դատական նիստի մասին, չի ներկայանում դատական նիստին կամ չի ներկայացնում դատական նիստը հետաձգելու վերաբերյալ հիմնավորված միջնորդություն, ապա դատարանը

ինքնաբացարկի հիմքերը կողմերին բացահայտում է գրավոր եղանակով: Նշված ծանուցագիրը ստանալու պահից եռօրյա ժամկետում ինքնաբացարկի հիմքերի վերաբերյալ գրավոր դիրքորոշում չներկայացվելու դեպքում ինքնաբացարկը համարվում է կողմի կողմից անտեսված:»:

Հոդված 3. Օրենսգրքի 153-րդ հոդվածում՝~~ի~~

1) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ կետով.

«4) իրավունքի իրականացման սահմանափակում:».~~÷~~

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 7-րդ մասով.

«7. Որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի նկատմամբ մեկ դատական վարույթի շրջանակում յուրաքանչյուր դատական ատյանում դատական տուգանք կարող է կիրառվել, եթե մինչև դատական տուգանքի կիրառման հանգեցնող արարքը կատարելը փաստաբանի նկատմամբ կիրառվել է առնվազն երկու այլ սանկցիա:»:

Հոդված 4. Օրենսգրքի 155-րդ հոդվածում՝

1) 3-րդ մասի 2-րդ նախադասությունը հանել.

2) լրացնել հետևյալ բովանդակությամբ 4-րդ և 5-րդ մասերով.

«4. Եթե վերաքննիչ կամ Վճռաբեկ դատարանը վերացնում է դատական տուգանք կիրառելու մասին որոշումը, ապա դատական ակտով լուծում է նաև նախապես վճարված տուգանքի վերադարձի հարցը:~~»÷~~

5. Մեկ դատական վարույթի շրջանակում յուրաքանչյուր դատական ատյանում որպես ներկայացուցիչ հանդես եկող փաստաբանի նկատմամբ դատական տուգանք կարող է կիրառվել ոչ ավելի, քան մեկ անգամ:»:

Հոդված 5. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 155.1-ին և 155.2-րդ հոդվածներով.

«**Հոդված 155.1. Դատական նիստից դուրս դատական տուգանք կիրառելու առանձնահատկությունները**

1. Եթե դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցը դրսևորել է այնպիսի վարքագիծ կամ կատարել է այնպիսի արարք, որը կարող է հանգեցնել դատական տուգանքի կիրառման, ապա այդ անձից պահանջում է գրավոր պարզաբանում վերոնշյալ վարքագծի կամ արարքի վերաբերյալ: Պարզաբանում պահանջելու մասին ծանուցագրում նշվում են այն հանգամանքները, որոնք դատարանի գնահատմամբ կարող են հանգեցնել դատական տուգանքի կիրառման:

2. Գրավոր պարզաբանումը կարող է ներկայացվել պարզաբանում պահանջելու մասին դատարանի ծանուցագիրը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում:

3. Գրավոր պարզաբանում ներկայացնելու համար սահմանված ժամկետը լրանալուց հետո 20-օրյա ժամկետում դատարանն առանց դատական նիստ հրավիրելու որոշում է դատական տուգանք կիրառելու հարցը: Դատական տուգանք կիրառելու հիմքերի բացակայության դեպքում նույն ժամկետում դատարանը դատավարության մասնակցին ծանուցում է այդ մասին:

Հոդված 155.2. Իրավունքի իրականացման սահմանափակում կիրառելու առանձնահատկությունները

1. Իրավունքի իրականացման սահմանափակումը դատավարության մասնակցի՝ սույն օրենսգրքով սահմանված որոշակի իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում համապատասխան որոշմամբ դրանց իրականացման համար ժամանակային կամ քանակական պայմանների սահմանումն է:

2. Սույն հոդվածով նախատեսված դատական սանկցիան կարող է կիրառվել միայն հետևյալ իրավունքները պարբերաբար չարաշահելու դեպքում.

1) գործի նյութերին ծանոթանալը, դրանց պատճեններ ստանալը, քաղվածքներ, լուսանկարներ, լուսապատճեններ և պատճեններ անելը,

2) բացարկ հայտնելը.

3) ապացույցներ ներկայացնելը և դրանց հետազոտմանը մասնակցելը,

4) դատավարության մասնակիցներին հարցեր տալը,

5) միջնորդություններ ներկայացնելը, ցուցմունքներ տալը,

6) դիրքորոշում ներկայացնելը:

3. Սույն հոդվածով նախատեսված դատական սանկցիայի կիրառումը չպետք է բացառի համապատասխան իրավունքի բուն իրացումը:

4. Եթե դատարանը գտնում է, որ դատավարության մասնակիցը դրսևորել է այնպիսի վարքագիծ կամ կատարել է այնպիսի արարք, որը կարող է հանգեցնել իրավունքի իրականացման սահմանափակում սանկցիայի կիրառման, ապա այդ անձին հասկանալի ձևով նախազգուշացնում է սանկցիա կիրառելու դատարանի իրավասության մասին, պարզաբանում սանկցիա կիրառելու հիմքերը և հետևանքները: Եթե դատավարության մասնակիցը նախազգուշացումից հետո կատարում է սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված գործողություններից որևէ մեկը, ապա դատավորն իրավասու է այդ անձի նկատմամբ կիրառելու իրավունքի իրականացման սահմանափակում սանկցիան:

5. Իրավունքի իրականացման սահմանափակումը դատական նիստում կիրառվելու դեպքում կայացվում է նույն դատական նիստում դատարանի արձանագրային որոշմամբ, որն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, իսկ դատական նիստից դուրս կայացվելու դեպքում՝ առանձին դատական ակտի ձևով:

6. Իրավունքի իրականացման սահմանափակման ենթարկված անձի կամ նրա ներկայացուցչի միջնորդությամբ դատարանն իրավունք ունի վերականգնելու իրավունքի իրականացումը՝ վերացնելով կիրառված ժամանակային կամ քանակական պայմանները:»:

Հոդված 6. Օրենսգրքի 371-րդ հոդվածի 3.1-ին մասի առաջին նախադասությունում «սույն հոդվածի 368-րդ հոդվածի 1-ին մասի» բառերը փոխարինել «սույն օրենսգրքի 368-րդ հոդվածի 2-րդ մասի» բառերով:

Հոդված 7. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքը տարածվում է նաև մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը ներկայացված հայցադիմումների (դիմումների) հիման վրա հարուցված գործերի վրա:

3. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը կիրառված դատական տուգանքների կամ դատական տուգանք կիրառելու մասին միջնորդությունների նկատմամբ կիրառելի են տուգանքի կիրառման կամ միջնորդության ներկայացման պահին գործող նորմերը:

4. Սույն օրենքի 1-ին հոդվածը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո տեղի ունեցած դատական կազմի կամ դատական կազմում ընդգրկված դատավորի փոփոխության դեպքերի վրա:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ (Կ-902-27.08.2024-ՊԻ-011/1 և Կ-902[1]-27.08.2024-ՊԻ-011/1) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություն ներն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	***ՀՀ կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ**	2024 թվականի փետրվարի 28-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել և նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-98-Ն օրենքը, որի 1-ին հոդվածով լրացում է կատարվել Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածում, և 1.2-րդ մասով սահմանվել է, որ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության վարչական	**Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:**	**Ընդունվել է:**

			ակտերը, ինչպես նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123.4-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերով վարչական ակտերը կարող են վիճարկվել դատական կարգով միայն վարչական կարգով բողոքարկվելուց (գանգատարկվելուց) հետո:»: Այսինքն, այս կարգավորմամբ նախատեսվել է, որ Ներքին գործերի նախարարության ոստիկանության բոլոր վարչական ակտերը ենթակա են դատական կարգով բողոքարկման միայն վերադասության կարգով բողոքարկելուց հետո: Դեռևս 2017 թվականի դեկտեմբերին Վարչական դատավարության օրենսգիրքը լրացվել է նոր՝ «Անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վարույթը» վերտառությամբ գլխով, որով կարգավորվում է «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց		

			պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհետաձգելի միջամտության որոշման վիճարկման ընթացակարգը: Վերը ներկայացվածի շրջանակներում ներկայումս ստեղծվել է մի իրավիճակ, երբ վերադասության կարգով պարտադիր բողոքարկման որոշումներ են դարձել նաև «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհետաձգելի միջամտության որոշումները, որի արդյունքում, եթե նույնիսկ Վարչական դատավարության համապատասխան գլխով սահմանված է նշված գործերով վարույթի իրականացման մինչև 48- ժամյա ժամկետ, ապա վերադասության կարգով բողոքարկելուց հետո այս ժամկետը միանշանակ երկարաձգվելու է, և նույնիսկ հետագայում դատարանի կողմից		

			արագ քննության կազմակերպումը լինելու է արդեն ժամանակավրեպ: Ուստի նշվածով պայմանավորված, առաջարկում ենք Վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1.2-ին մասում նախատեսել բացառություն՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհետաձգելի միջամտության որոշումները պարտադիր վերադասության կարգով բողոքարկելու ընդհանուր պահանջից: Մասնավորապես՝ առաջարկում ենք՝ նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ 1-ին հոդվածով. «2013 թվականի դեկտեմբերի 5-ի Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1.2-րդ մասը «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության վարչական ակտերը,» բառերից հետո լրացնել « բացառությամբ «Ընտանեկան և		

			կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհետաձգելի միջամտության որոշումների,» բառերով:» և համապատասխանաբար փոխել նախագծի հաջորդող հոդվածների համարակալումը:		
2.	***ՀՀ կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ և 3-րդ հոդվածներ, «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ**	Կարևորելով Նախագծերով հետապնդվող նպատակը՝ կապված իրավունքի չարաշահման դեմ պայքարելու անհրաժեշտության հետ՝ միաժամանակ դատավարությունների ընթացքում էական է նաև այնպիսի կառուցակարգերի սահմանումը, որոնք կբալանսավորեն իրավաբանական օգնություն ստանալու և իրավունքներից բարեխիղճ օգտվելու սկզբունքները: Մասնավորապես, պետք է լինեն այնպիսի կարգավորումներ, որոնք առավել լայն երաշխիքներ կնախատեսեն իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի լիարժեք իրացման առումով: Այսպիսով,	**Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:**	**Ընդունվել է:**

		կատարելու մասին» օրենքի նախագծի 3-րդ և 4-րդ հոդվածներ	Նախագծերով փաստաբանների գործունեության երաշխիքներ նախատեսելու և միաժամանակ իրավաբանական օգնություն ստանալու անձանց իրավունքը լիարժեք ապահովելու նկատառումներով՝ առաջարկվում է **«Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի** 3-րդ և 4-րդ և **«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի** 2-րդ և 3-րդ հոդվածներով՝ • Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 153-րդ հոդվածը և Վարչական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածը լրացնել 7-րդ մասերով այն մասին, որ փաստաբանների նկատմամբ դատական տուգանք կարող է կիրառվել, եթե արդեն իսկ կիրառվել է երկու այլ սանկցիա, • Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 155-րդ հոդվածը և Վարչական		

			դատավարության օրենսգրքի 101.2-րդ հոդվածը լրացնել 5-րդ մասերով այն մասին, որ մեկ վարույթի ընթացքում փաստաբանի նկատմամբ տուգանք կարող է կիրառվել մեկ անգամ:		
3.	***ՀՀ կառավարություն***	**«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդված**	Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 101.4-րդ հոդվածում իրավունքի իրականացման սահմանափակման կիրառման հիմք է համարում «որոշակի իրավունքների սույն օրենսգրքով սահմանված պարբերաբար չարաշահման դեպքում»: Նշված ձևակերպման տառացի մեկնաբանությունից ստացվում է, որ նշված դատական սանկցիան կիրառվում է, եթե դատավարության մասնակիցն ունի որոշակի իրավունքների օրենսգրքով սահմանված պարբերաբար չարաշահման հնարավորություն: Հիմք ընդունելով նշվածը՝ առաջարկվում է Նախագծի 4-րդ հոդվածով լրացվող 101.4-րդ հոդվածում «դատավարությանը մասնակցող այլ անձանց՝ որոշակի իրավունքների սույն օրենսգրքով սահմանված պարբերաբար չարաշահման դեպքում» բառերը	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

			փոխարինել «դատավարությանը մասնակցող այլ անձանց՝ սույն օրենսգրքով սահմանված որոշակի իրավունքների պարբերաբար չարաշահման դեպքում» բառերով:		
4.	***ՀՀ կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	2024 թվականի մայիսի 2-ին Ազգային ժողովի կողմից ընդունվել և նույն թվականի մայիսի 30-ին ուժի մեջ է մտել «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքը, որի 11-րդ հոդվածով նախատեսվել է Վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Դատարանի կողմից սույն մասով նախատեսված գործողությունները սույն օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին հոդվածով նախատեսված գործերով կատարելը բավարար է սույն օրենսգրքի 5-րդ հոդվածով նախատեսված գործի փաստերն ի	**Ընդունվել է: Կատարվել են համապատասխան փոփոխություններ:**	**Ընդունվել է:**

			պաշտոնե պարզելու սկզբունքի շրջանակներում պահանջվող բոլոր գործողությունները կատարված համարելու համար:»: Մինչ այս կարգավորման նախատեսումը մի կողմից օրենսգրքով դատավարության կողմերի համար նախատեսված է եղել որոշակի ժամկետի ավարտից հետո ապացույցներ ներկայացնելու համար բացասական հետևանքներ, այն է՝ դատարանի կողմից դրանք չքննարկելը, մյուս կողմից նույն գործով վերաքննիչ բողոք ներկայացնելու դեպքում կողմը կարող էր ներկայացնել նոր ապացույց և գործնականում ստացվում էր այնպես, որ դատարանի կողմից սահմանված ժամկետի ավարտից հետո ապացույցներ չընդունելը կրում էր ձևական բնույթ, և այս իրավիճակի հետևանքով անհարկի ծանրաբեռնվում էր Վարչական դատարանը: Սակայն, հարկ է նշել, որ Վարչական դատավարության օրենսգրքում քննարկվող փոփոխությունը կատարելիս Վարչական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.1-ին մասը, ի տարբերություն ներկայիս		

			բովանդակության, ունեցել է հետևյալ տեսքը. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.7-րդ, 129.2-րդ, 131-րդ, 135.2-րդ և 137.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը՝ անկախ ներկայացված հայցատեսակից, իրականացվում է գրավոր ընթացակարգով:»: Նշված կարգավորումը խմբագրվել է 2024 թվականի փետրվարի 28-ին Ազգային ժողովի կողմից ընդունված և նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-98-Ն օրենքով, որի արդյունքում հոդվածով թվարկվող վարչական իրավախախտումների շրջանակը կրճատվել է և արդյունքում ստացվել է, որ բարեփոխումը վերաբերում է միայն Հայաստանի Հանրապետության Վարչական		

			իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 124.7-րդ և 137.4-րդ հոդվածներին: Ուստի, Վարչական դատավարության օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մասի կարգավորումները նաև Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 129.2-րդ, 131-րդ և 135.2-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի համար կիրառելի դարձնելու նպատակով առաջարկում ենք նախագիծը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր հոդվածով. «Օրենսգրքի 117-րդ հոդվածի՝ 1) 1.1.-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 123-րդ, 123.3-րդ, 123.4-րդ հոդվածներով, 123.5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 123.6-րդ, 124-րդ, 124.3-րդ, 124.4-րդ, 124.7-		

			րդ, 129.2-րդ, 131-րդ, 135.2-րդ և 137.4-րդ հոդվածներով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերի քննությունը՝ անկախ ներկայացված հայցատեսակից, իրականացվում է գրավոր ընթացակարգով:» և համապատասխանաբար փոխել նախագծի հաջորդող հոդվածների համարակալումը:		
5.	***ՀՀ կառավարություն***	«Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծ	2024 թվականի փետրվարի 28-ին Ազգային ժողովի կողմից ընդունված և նույն թվականի հուլիսի 1-ին ուժի մեջ մտած «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՕ-98-Ն օրենքի 2-րդ հոդվածով Վարչական դատավարության 117-րդ հոդվածը լրացվել է 1.2-րդ մասով, և նախատեսվել է, որ «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության դեմ ներկայացվող հայցադիմումների քննությունը՝ անկախ ներկայացված հայցատեսակից, իրականացվում է գրավոր ընթացակարգով:» Նշվածից բխում է, որ միայն գրավոր ընթացակարգով է	***Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:***	**Ընդունվել է:**

			իրականացվելու նաև անհետաձգելի միջամտության որոշման բողոքարկման վարույթը: Սակայն այս վարույթի առանձնահատկություններից է այն, որ դրանով նիստերի իրականացումը կազմում է գործի քննության անբաժանելի անհրաժեշտ մասերից մեկը՝ նման որոշակի առանձնահատկություններ ունեցող գործերը առավել արդյունավետ քննելու և լուծելու համար: Նշվածով պայմանավորված անհրաժեշտություն է առաջացել Վարչական դատավարության օրենսգրքի 117-րդ հոդվածի 1.2-րդ մասում նախատեսել բացառություն՝ «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված անհետաձգելի միջամտության որոշումների վիճարկման գործերի քննությունը միայն գրավոր ընթացակարգով իրականացնելու ընդհանուր պահանջից: Ուստի հիմք ընդունելով		

			վերոգրյալը և սույն ամփոփաթերթի 5-րդ կետով Օրենսգրքի 117-րդ հոդվածում փոփոխություն նախատեսելու հանգամանքը, առաջարկում ենք նախագծում՝ Օրենսգրքի 117-րդ հոդվածում փոփոխություն նախատեսող հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 2-րդ մասով. «2) 1.2-րդ մասը «գրավոր ընթացակարգով» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենսգրքի 31.3-րդ գլխով քննվող գործերի» բառերով:» :		
6.	***ՀՀ կառավարություն***	««Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքում» լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	Օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մասում առկա տեխնիկական վրիպակը վերացնելու նպատակով առաջարկում ենք «Օրենսգրքի 118-րդ հոդվածի 3-րդ մասի «1.1-ին հոդվածով» բառերը փոխարինել «1.1-ին մասով» բառերով»:	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**
7.	***ՀՀ կառավարություն***	««Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ	Հիմք ընդունելով սույն ամփոփաթերթի 4-րդ կետով առաջարկվող փոփոխությունը և առաջարկվող փոփոխությունը սույն օրենքի նախագծի ընդունվելուց և ուժի մեջ մտնելուց	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

		և լրացումներ կատարելու մասին օրենքում» լրացում կատարելու մասին» օրենքի նախագծի 5-րդ հոդված	հետո կիրառելի դարձնելու անհրաժեշտությունը, առաջարկում ենք լրացումներ և փոփոխություն նախատեսել նաև Նախագծի անցումային դրույթներում: Մասնավորապես, առաջարկում ենք 2-րդ մասը «Սույն օրենքը» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի,» բառերով և «հիման վրա հարուցված գործերի վրա» բառերը փոխարինել «քննության նկատմամբ» բառերով, հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով. «3. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը տարածվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո ներկայացված հայցադիմումների քննության կապակցությամբ իրականացվող դատավարական գործողությունների վրա:» և համապատասխանեցնել հոդվածի մասերի համարակալումը:		
8.	***ՀՀ կառավարություն***	««Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին	2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքի 1-ին, 35-րդ և 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն	**Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխություն:**	**Ընդունվել է:**

		օրենքում» լրացում կատարելու մասին» օրենքի նախագիծ	վարչական դատարանում քննության ենթակա գործերի շրջանակից 2025 թվականի հունվարի 1-ից դուրս են գալու հանրային կամ այլընտրանքային ծառայության անցնելու, այն իրականացնելու, ծառայությունից ազատելու հետ կապված վեճերը և նոտարի գործողությունների իրավաչափությունը վիճարկելու վերաբերյալ գործերը, սակայն չի նախատեսվել կարգավորում, որից պարզ կլինի, որ մինչև 2025 թվականի հունվարի 1-ը վարույթ ընդունված գործերի քննությունը 2025 թվականի հունվարի 1-ից հետո շարունակվելու է վարչական դատավարության կարգով: Ուստի, իրավիճակը կարգավորելու նպատակով առաջարկում ենք նախագծերի փաթեթը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախագծով. «**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ» ԼՐԱՑՈՒՄ**		

			ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ **Հոդված 1.** 2024 թվականի մայիսի 2-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-220-Ն օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նախադասությամբ. «Մինչև սույն մասով նախատեսված հոդվածների ուժի մեջ մտնելը Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները, որոնք վարույթ են ընդունվել վարչական դատարանի կողմից, շարունակում են քննվել վարչական դատարանում, իսկ 220-րդ հոդվածի 1-ին մասի հիման վրա ներկայացված հայցադիմումները քննվում են մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը գործող խմբագրությամբ Վարչական դատավարության օրենսգրքի 31-րդ գլխով նախատեսված կանոններով:»:		

			Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:»:		